

16-11-2018

Կիրակոս Գույումճեան - խօսք

ՀՄԸՄ-ի 100-Ամեակ – Պաշտոնական Օր

Քուէթ

- Գերաշնորհ Տէր Մասիս Եպսկ. Զօպուեան՝ Առաջնորդ Քուէթի եւ Շրջակայից Հայոց Թեմին
- Վսեմաշուք Հ. Հ. Լիազօր եւ Արտակարգ Դեսպան՝ Պրն. Սարմեն Պաղտասարեան
- Արժանապատիւ Տէր Արտակ Աւար Քահանայ Քէհեաեան՝ Հոգեւոր հովիւ Քուէթի Հայոց
- Մեծայարգ Հ. Հ. դեսպանատան Առաջին քարտուղար եւ Հիւպատոս՝ Պրն. Վարդգէս Յովսէփեան
- Մեծայարգ Ասպետներ եւ Ազգային Մարմիններու ներկայացուցիչներ
- Շատ սիրելի ՀՄԸՄ-ական եղբայրներ եւ քոյրեր,
- Յարգելի ներկաներ,

Ինձի համար մեծ պատիւ է այսօր, այս պատմական օրով խօսք առնել ՀՄԸՄ-ի դարաւոր միութեան Քուէթի շրջանի հարիւրամեակի տօնակակատարութեան գլխաւոր ձեռնարկին եւ վայելել անոր բարձրապատիւ նախագահութիւնը, որուն համար շնորհակալ եմ ՀՄԸՄ-ի վարչութեան:

Անշուշտ կը իօստանամ խօսքս ներկայացնել կարճ եւ ամփոփ հեռու մնալով աւելորդաբանութիւններէ ու ճիգ ընելով, որպէսզի բոլորս վայելենք այսօրուան տօնը:

Այո սիրելիներ, այսօր տօն է մեզի համար: Ամբողջ հայութեան համար եւ յատկապէս Քուէթի հայութեան համար, որ բաւական դժուար ճանապարհներէ անցնելէ ետք կարողացաւ իր ամբողջական ներուժը ներդնելով խաղաղ արհասցընել Քուէթի ՀՄԸՄ-ի մարմինը եւ այդ ճիգերուն շնորհիւ է, որ այսօր բոլորս

միատեղ եւ մէկ մարդու նման եկած ենք նշելու մեր սիրելի կառոյցին՝ ՀՄԸՄ-ի ծննդեան 100-ամեայ յոբելիանը:

Մեր հաւաքական կեանքին մէջ, գաղութային թէ համահայկական ամենօրեայ դրութեամբ մենք ականատեսը կը դառնանք բազմաթիւ հարցերու եւ բնական է, որ այդ հարցերուն լուծման համար պարտաւոր ենք ունենալ այնպիսի կառոյցներ, որ մեզի համար պիտի պատրաստեն մեր ժողովուրդին համար ամենէն թանկն ու կարեւորը, որը մարդուժն է:

Այո՛ սիրելի ներկաներ, այո սիրելի ՀՄԸՄ-ականներ, մենք միշտ ալ գիտակցած ենք, որ ՀՄԸՄ-ը իյլ սուղծման առաջին իսկ օրէն կը շարունակէ մնալ մեր ժողովուրդի մարդակերտութեան եւ հայակերտութեան իրական դպրոցներէն մին, եթէ ոչ գլխաւոր դպրոցը:

Դպրոց, որ արժանի է մեր գուրգուրանքին եւ սիրոյն: Եւ դպրոց, որուն տօնին համար է, որ այսօր մեկտեղուած ենք այստեղ:

Քիչ առաջ ըսի ու դարձեալ կը յիշեձնեմ, որ այսօր տօնական օր է մեզի համար: Մեզի համար ու բոլոր անոնց, որոնք գիտցած են բարձր գնահատել այս տիտանական կառոյցը:

Մեզի համար ու բոլոր անոնց, որոնք պայքարեցան, որ ՀՄԸՄ-ի կառոյցը մնայ միակամ, ուժեղ ու յաղթահարէ բոլոր դժուարութիւնները:

Սիրելի ՀՄԸՄ-ականներ, սիրելի նուիրեալներ, վստահ եղէք, որ ձեր աշխատանքն ու եռանդը մեզի բոլորիս համար հպարտանքի առիթ է: Մենք հպարտ ենք ձեզմով ու պատրաստ ենք ամէն գնով ձեր կողքին ըլլալ, այսօր, վաղը եւ յաւիտեան:

Թոյլ տուէք նաեւ շեշտեմ, որ այսօրուան աշխարհին մէջ տիրող պայմաններուն մէջ ՀՄԸՄ-ը, իր ենթամարմիններով ըլլան սկաուտական կամ մարզական, ինչպէս նաեւ մեր բոլոր կառոյցները պարտաւոր են քայլ պահել նոր ու արդիական պայմաններուն հետ:

Մենք բոլորս պարտաւոր ենք նեցուկ դառնալ մեր ՀՄԸՄ-ական պատասխանատուններուն, մեր վարչականներուն ու խմբապետներուն, որպէսզի Քուէթի ՀՄԸՄ-ի կառոյցը հաստատուն քայլերով եւ հաւաքապէս դառնայ արդիական եւ այսօրուան երիտասարդութեան համար գրաւիչ եւ սիրելի ակումբ մը:

Չմոռնանք, որ ՀՄԸՄ-ը մարդակերտումի եւ հայակերտումի իսկական դպրոց է ու այդ առումով ալ բոլորս պարտաւոր ենք ձեռք-ձեռքի տալ, նոր ամեակներ, նոր հարիւրամեակներ կերտելու համար:

Ու այս առումով դարձեալ վստահ եղէք սիրելի ՀՄԸՄ-ականներ, որ մեր ժողովուրդը անտարբեր պիտի չմնայ ի տես ձեր մեծ յաջողութիւններուն, ու հարկ եղած պարագային ոչ միայն Բարոյական այլ նաեւ նիւթական աջակցութիւն պիտի ցուցաբերէ ի սեր մեր հաւաքական կեանքի բարելաւման:

Սիրելի ներկաներ, ինծի համար կեանքի մէջ յաջողութեան հասնելու ամենէն կարեւոր գրաւականը մարդոց եւ շրջապատի վստահութիւնը շահիլն է:

Ու այսօր աւելի քան որեւէ ժամանակ, թոյլ տուէք ըսել, որ մեր վաղուան յաղթանակները ամրագրուած պիտի ըլլան, անհատական յաջողութիւնը հաւաքական ոլորտ բերելու հրամակայանով:

Յետ այսու պիտի չընդունինք, որ իբրեւ հայեր մենք յաջողակ ենք միայն անհատական գետնի վրայ, այլ պարտաւոր ենք հաւատալ, որ անհատական յաջողութիւններ գրանցած մարդը, գործարարը կամ աշխատաւորը, վաճառականը կամ ուսումնասարը, բոլորն ալ միասին, ձեռք ձեռքի բռնելով պարտաւոր են իրենց անհատական յաջողութեան կարեւոր մէկ մասնիկը նուիրել ազգին, տալ մեր հասարակութեան եւ տալ մեր պանծալի ՀՄԸՄ-ին:

Չմոռնանք, որ մենք աւելի ուժեղ ենք, երբ միասին ենք:
Մենք աւելի անպարտելի ենք, երբ միակամ ենք եւ մենք աւելի զօրեղ ենք, երբ կը հաւատանք նոր յաղթանակներուն:

Կեցցեն մեր միութենականները, եւ համակիրները
Կեցցեն Հայաստանի ու Արցախի Հանրապետութիւնները
Եւ կեցցէ՛ մեր բոլորին պարծանք՝ ՀՄԸՄ-ը:

Շնորհակալութիւն